

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՄԻՋՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

1969 թ. մայիսի 15—17-ին Երևանի պետական համալսարանում անցկացվեց հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված համամիութենական միջհամալսարանական գիտական նստաշրջան, որին մասնակցում էին և զեկուցումներ կարդացին ինչպես Երևանի, այնպես էլ Մոսկվայի, Կիևի, Քրիլիսիի, Մինսկի, Վիլնյուսի, Տաշքենդի, Ալմա-Աթայի և այլ քաղաքների համալսարաններից ժամանած գիտնականներ:

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը:

«Հայ ժողովրդի մեծ բանաստեղծը» զեկուցմամբ հանդես եկավ պրոֆ. Մ. Մկրյանը: Խորենացու, Նարեկացու և Արովյանի կողքին, ասաց նա, Թումանյանը դարագլուխ բացող դեմք է հայ մշակույթի պատմության մեջ: Թումանյանի ստեղծագործությունը խորն է ու հարուստ, իր ձևի, զեղեցկության ու շափի տեսակետից այն մնում է դարաշրջանի գրականության զագաթը:

Պրոֆ. Տ. Հախումյանի զեկուցումը նվիրված էր «Թումանյանը ժողովուրդների բարեկամության երգիչ» թեմային: Մոսկվայի համալսարանի պրոֆ. Ա. Շարիֆը անդրադարձավ անդրկովկասյան ժողովուրդների գրական առնչությունների պատմությանը, ցույց տալով, որ Հ. Թումանյանի հոգուն հարազատ ու թանկ էին հայի, վրացու և ադրբեջանցու կարիքները, շահերը, լավ ապագայի իղձերը: Քրիլիսիի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Բ. Շիլակաձեն խոսեց այն մասին, որ բանաստեղծը, ապրելով և ստեղծագործելով Քիֆլիսում, սիրեց վրաց ժողովրդի կյանքը, մշակույթը, բնավորությունը: Թումանյանը շատ ջերմ տողեր է նվիրել վրաստանին, ջատագովել հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը:

Կիևի համալսարանի դասախոսներ Վ. Կուպտիլովն ու Օ. Կովալը զեկուցեցին Թումանյանի բանաստեղծությունների ուկրաիներեն թարգմանությունների մասին: Դեռ անցյալ դարի վերջերին հեղափոխական բանաստեղծ Պավլո Գրաբովսկին Յակուտիայում՝ աքսորված

ժամանակ, թարգմանել է Թումանյանին: Սակայն մեծ բանաստեղծը ուկրաինացի ընթերցողին ամբողջ փայլով ներկայացավ Պավլո Տիշինայի բարձրորակ թարգմանություններով:

«Թումանյանը և ուս գրականությունը» զեկուցմամբ հանդես եկավ պրոֆ. Լ. Նովիսնովսկայանը, ընդգծելով, որ հայ-ռուսական պատմա-հասարակական և գրական-մշակութային կապերը Թումանյանին զբաղեցրել են ամբողջ կյանքում: Մեծ մտածողի խորաթափանց մտքով նա ընկալել է այդ բարեկամության գործուն նշանակությունը հատկապես հայ ժողովրդի ճակատագրում:

Քրիլիսիի համալսարանի պրոֆ. Ս. Խուցիշվրիլիս պատմեց այն սիրո ու հարգանքի մասին, որ վրաց գրական ու հասարակական գործիչները տածել են Թումանյանի հանդեպ: Նրանցից շատերը բարեկամական կապի մեջ են եղել բանաստեղծի հետ: Տաշքենդի համալսարանի դասախոս Ռ. Ինոզամովը և Ալմա-Աթայի համալսարանի դոցենտ Տ. Կակիշևը պատմեցին մեծ բանաստեղծի հանդեպ ուզրեկ և դազախ ընթերցողների ունեցած հետաքրքրության մասին: Թումանյանի լեզվի ժողովրդայնության հարցի մասին զեկուցեց պրոֆ. Գ. Սևազը, հատկապես նշելով, որ գրողի լեզուն հարստացել է ժողովրդական բառ ու բանով, Հայաստանի բնության ու հայկական կենցաղի կուրորտով, հայերենի ճոխ միջոցներով: Զեկուցողը անդրադարձավ նաև բանաստեղծի գործերի ռուսերեն թարգմանության հարցերին:

Բանասիրական գիտությունների դոկտոր Հ. Թամրազյանը հանդես եկավ «Թումանյանը քննադատ» թեմայով: XIX դարի գեղագիտական մտքի և սեփական ստեղծագործության փորձի հիման վրա ձևավորված՝ Թումանյանի գրականագիտական ըմբռնումները խոշոր ներդրում են հայ քննադատական մտքի պատմության մեջ: Բանաստեղծը հեռու էր հայրենիքի մակերեսային պատկերումից: Թումանյանը ձգտում էր դեպի այն ուղիները, որոնք հայ գրականությունը կարող են տանել միջազգային մայրուղի: Դոցենտ Մ. Զավարյանը խոսեց Թումանյանի մտածելակերպի, ժողովրդական

կենդանի հումորի նրա խոր զգացողության մասին, Պրոֆ. Արար Շամիրովը նշեց, որ հայ գրողներից քրդերեն ամենաշատ թարգմանված է Քումանյանը, որը մեծապես ազդել է քուրդ սովետական դրականության զարգացման վրա: Մ. Զանփուլաղյանը խոսեց հայ բանահյուսության ավանդույթների և Քումանյանի ստեղծագործության առնչության շուրջը: Քրիլիսիի համալսարանի դոցենտ Ա. Խառատյանը զեկուցում կարդաց «Քումանյանը և սկզբնական կոմիտեն» նյութի մասին: Ցարական գրաքննության արխիվի ուսումնասիրության հիման վրա նա նշեց այն ավերածությունը, որին ենթարկվել են հայ գրողների, այդ թվում նաև Քումանյանի գործերը, որոնցից շատերի տպագրությունը արգելվել է:

Քումանյանի ամբողջ ստեղծագործական ուղին բնութագրվում է մի տիպական միտումով. ավելի ու ավելի մերձենալ հարազատ ժողովրդին, արտացոլել նրա անցյալն ու ներկան, հոգեբանությունն ու հույսերը, նշեց բանասիրական գիտությունների դոկտոր Է. Զբաբյանը:

«Քումանյանը և ժողովրդայնության պրոբլեմը» զեկուցման մեջ, Քումանյանի ստեղծագործությունը, ասաց նա, մեծապես ընդլայնեց ժողովրդայնության սկզբունքը:

Մինսկի համալսարանի դոցենտ Կ. Խրուշենկոն և Վիլնյուսի համալսարանի դոցենտ Պ. Ուծկալնիսը պատմեցին այն սիրո մասին, որ տաժում են բելոռուս և լիտվացի ընթերցողները հայ գրողի հանդեպ: 12 տարի առաջ հրատարակվեց Քումանյանի գործերի բելոռուսերեն առաջին ժողովածուն, իսկ 100-ամյակի օրերին լույս կտեսնեն գրողի ընտիր երկերը: Քարգանական և այլ կարգի միջոցառումներ կլինեն նաև լիտվայում: Կիևի համալսարանի դոցենտ Ն. Գնատյուկը զեկուցեց «Քումանյանը և Պավլո Տիշինան», իսկ դոցենտ Ղ. Այվազյանը՝ «Հովհաննես Քումանյանը ուսու նախահեղափոխական քննադատության գնահատմամբ» թեմայով, մասնավորապես նշելով, որ նրան թարգմանել են Բալմոնտը, Բրյուսովը և ուրիշներ, որոնք բարձր են գնահատել հայ մեծ գրողին:

Ա. ՂԱԼԻՅԱՆ

Հին Արևելքի քաղաքներին և՛ Արևելքին և՛ Երվանու Գիսկան և ՍԱՇՐՁԱՆ

1969 թ. մայիսի 19—23-ը Երևանում տեղի ունեցավ արևելագետների համամիութենական գիտամտղով, որը նվիրված էր Հին Արևելքի քաղաքների առաջացմանն ու ներքին կյանքին (մ. թ. ա. III—I հազարամյակներում), ինչպես նաև տեղական և տարանցիկ առևտրի հարցերին:

Գիտամտղովի աշխատանքներին մասնակցելու համար Մոսկվայից, Անիկզրազից, Քրիլիսիից, Բաքվից, Վիլնյուսից, Գաուդավալիսից և Գուշաներից Երևան մամանեցին մի խումբ արևելագետներ:

Նյույթ ունեցողները իրենց զեկուցումներում կանգ առան Շումերի, Բաբելոնի, Խեթական պետության, Սրբաբուրի, Իրանի, Հայաստանի, Վրաստանի և Հինարևելյան մի շարք այլ պետությունների քաղաքների ներքին կյանքի և առևտրի հարցերի վրա, ելնելով համաշխարհային արևելագիտության նվաճումներից:

Ի. Մ. Գյակոնովը «Քաղաքի պրոբլեմները Բաբելոնում մ. թ. ա. II հազարամյակում» զեկուցման մեջ վերլուծության ենթարկելով փաստական հարուստ նյութը և նկատի ունենալով, որ Հին Արևելքի քաղաքը արտաշատում է սովյալ մամանակաշրջանի տնտեսության ձևերի և հասարակության սոցիալական հարաբերությունների յուրահատուկ առանձնահատկու-

թյունները, նշեց, որ սեպագիր սկզբնաղբյուրները և պեղածո նյութերը ցույց են տալիս, որ քաղաքը Հին Արևելքում եղել է որոշակի գյուղատնտեսական շրջանի և մասնագիտացված արհեստների կենտրոն, ինչպես նաև ներքին և միջազգային տարանքափոխանակության և նյութական կուտակման վայր: Որոշ պայմաններում այն եղել է նաև արքունական-տաճարային տնտեսության և պետական վարչական մարմինների կենտրոն: Սրան զուգահեռ Հին Արևելքի քաղաքն ուներ նաև համայնական ինքնավարության օրգաններ: Հին Արևելքում տնտեսական-քաղաքական միավորը եղել է ոչ թե քաղաքը առանձին վերցրած, այլ քնակավայրերի որոշակի մի խումբ, որոնք փոխադարձ տնտեսական կապի մեջ են եղել միմյանց հետ, զտնվել են միևնույն շրանցքի վրա, որն էլ փոքր գետի ավազանում կամ մեծ գետի որոշակի մի հատվածում: Հետագայում, երբ այդպիսի առանձին հատվածները միավորվում են մեկ կենտրոնացված պետության մեջ և երկրի պաշտպանվածությունը ավելի հուսալի է դառնում, նկատվում է գյուղացիական բնակչության տարածումը կենտրոնական քաղաքների պարիսպներից դուրս, որի հետևանքով առաջանում են քաղաքային փոքր և գյուղական մեծ բնասերքեր: Սակայն այն զեպքում, երբ քաղաքային բնակ-